Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

537

1278
835
П-86

881.33.4

ՈՍԿԷ ԱՍԵՂՆԵՐ

ՀԷՔԻԱԹ

2004.

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻՑ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԳԷՈՐԳ ԱՔԻՄԵԱՆՑ

ՏՓԽԻՍ
Ի տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանց:
1878

Էրես	Տող	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
17	11	խելքդ բեր	խելքդ գլուխդ բեր
17	2	կացրել	կացել
19	14	իրան	ուրիշներին։

3315.
Ո-84
Ա-Ղ

ՈՍԿԷ ԱՍԵՂՆԵՐ

ՀԵՔԻԱԹ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻՑ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԳԷՈՐԳ ԱՔԻՄԵԱՆՑ

ՏՓԽԻՍ
Ի տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանց։
1878

3875

Дозволено цензурою. Тифлисъ, 31 Декабря 1878 г.

3694
4 47

Типог. Мартиросіанца, на Орбеліановской улицѣ, д. № 5

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իմ սիրելի, իմ քաղցր հայ երեխաներք, ձմեռը եկել է. ձիւնը սար ու ձոր բռնել. ցուրտ քամին մարդու քինթ ու պռունգը սառեցնում է, ձեռներն ու ոտները փետացնում—ով որ հարկաւոր բան չունի, տանից դուրս դալ սիրտ չէ անում։ Դուք էլ վազէ վազ գնում էք ուսումնարան ու էլի վազէ վազ դողդողալով ետ գալի, բուխրի կողքին կուչ գալի, որ ձեռն ու ոտը տաքացնէք ախ ու ոխ քաշելով, որ էլ բաղում խաղալ ու վազվզել չէք կարող։

Ղորդ որ տխուր, շատ տխուր ժամանակ է, աւելի էս երկար երկար գիշերները. շուտով էլ կսկսվին ձմեռուան արձակուրդները—երկու շաբաթ ուսումնարան չէք գնայ, յայտնի բան է, դասեր էլ չէք ունենայ պատրաստելու. բաս ինչ պիտի անէք՝ մի՞թէ էս ողջ ժամանակը

բուխրի կշռին կուչ եկած տխուր պիտի անց-
կացնէք՝ մինչև օրերը տաքնան ու դուք կարո-
ղանաք բաղումը խաղալ։ Ոչ էս անկարելի բան է։

Որ դուք էս ձեր աղատ ժամանակը տխուր
չանցկացնէք ու չձանձրանաք, ես գերմաներէնից
ձեզ համար մէկ պատիկ ու գեղեցիկ հեքիաթ
եմ թարգմանել, որն որ իր պէս պատլիկ ու գե-
ղեցիկ անուն ունի—«ոսկէ ասեղներ»։ Գիտեմ որ
պիտի ասէք՝ թէ հայերէն գրածները դժուար
են, մենք չենք հասկանում, բայց չէ, մի՛ վախե-
նաք, ես էտ աչքի առաջ ունենալով՝ աշխա-
տել եմ էնպէս գրել, որ դուք հեշտութենով
հասկանաք։ Ուրեմն համարձակ վեր առէք էս
գիրը ու կարդացէք—էտպէսով էս տխուր ձմե-
ռուայ օրերն ու գիշերները ուրախ կանցկենան
և թէ էս հեքիաթի մէջ եղած խրատը կատա-
րէք՝ դուք ձեր կեանքումն էլ ուրախ ու բաղ-
դաւոր կլինիք։

Գ. Ա.

ՈՍԿԷ ԱՍԵՂՆԵՐ

Երբ որ դեռ Բաղդադ քաղաքը մեծ ու
երևելի Հարուն ալ Ռաշիդ խալիֆի իշխանու-
թենի տակը ծաղկում էր, կենում էր էնտեղ
մէկ դերձակ, որը քաղաքի պայծառացնելումը ոչ-
ինչ մասը չունէր և որի համար ոսկէ ձու դնող
հաւերը դեռ չէին ծնել։ Քաղաքի մի յետ ըն-
կած անկիւնում էր սրա մութը փոքրիկ տունը։
սա իր ողջ արհեստը պէտք էր ածում հասա-
րակ ժողովրդի, մշակների ու արհեստաւորների
համար կոշտ չուխայից շորեր կարելու կամ նը-
բանց հին ու մին գգդած և դջլոուած շորերը
կարկտնելու վրայ։

Ի հարկէ որ էս աշխատանքները նրան մեծ
արդիւնք չէին տայ, քանի որ քրտինք էլ թա-
փէր ու դիշեր կոտրէր և էս փոքր արդիւնքի

մէջ էլ էնքան մանակիցներ ունէր, որ խեղճ մարդը շատ անգամ մեծ նեղութենի մէջ էր լինում։

Այս խեղճ մարդը իր ասեղով երեք որդի պիտի կերակրէր. երեքն էլ եկել էն տարինեբուն էին հասել, որ նրանց հագուստի համար արդէն բաւական մեծ չուխայի կտոր էր գնում և օրը մի քանի անգամ փորը կուշտ լցնում էին, բայց դեռ էլի իրանց աշխատանքովը ընդհանուր պակասութենին օգնել չէին կարողացել։ Ցայտնի բան է, որ մի ասեղի համար էսքան մարդու հոգս ծաշելը շատ էր, ինչ կուզէ վարպետ ձեռի մէջ էլ խաղար էն ասեղը, էտուր համար էլ Աբու վարպետի խոհանոցը և սարդափը շատ անգամ դառն աղքատութենի մէջ էր լինում։ Ղորդ է Ալին՝ նրա անդրանիկ որդին իր հօր ազնիւ արհեստը սովորելու համար ծալապատիկ նստում էր դաղդահի վրայ, բայց սա բնութենով ծոյլ ու անհոգ էր, էտուր համար էլ հայրը շատ անգամ ստիպուած էր լինում նրա մեծ աշխատանքով սրած կարը քանդելու և նորից կարելու։

Մէկ օր Աբուի խանութը մէկ մարդ մտաւ, որի վերարկուն երկու անպզոյշ մշակ էն խանու-

թի առջևը իրանց բեռնովը պատռել էին, որ վերարկուն կարկանել տայ։ Էս մարդու խօսելու ձևը ու օտար հագուստը ցոյց էին տալի, որ շատ հեռու երկիրներ պտուտ էր եկել։ Աբուն սկսեց իր բանը։ Էտ միջոցում օտարականը կարեկցութենով աչքը Աբուի աղքատ բնակարանի մէջ, որ մի և նոյն ժամանակը խանութ, խոհանոց ու սարդափ էր, պտուտ ածելից ետոյ, ասեց. «Ես տեսնում եմ, վարպետ, որ դու ոսկէ ասեղներու տէր չես, թէ չէ էս քո տունը մի փոքր ուրիշ ձև կունենար։»

—Չեմ հասկանում, ինչ էլ որ ասել էք ուզում, պարոն, ասեց Աբուն։

—Մի՞թէ դու քու օրումը վարպետ Քալէքի վրայ ոչինչ չես լսել, որնոր Պարսկի շահի և ողջ նրա պալատի մեծաւորներու համար ամենապատուական շորերն է կարում, ասեց օտարականը։ Հենց էս Քալէքին բաղդը՝ ոսկէ ասեղներու տէր է շինել։ Կարելի է, վարպետ, ասես թէ ես իմ հասարակ ասեղովս էլ լաւ կկարեմ, թէ էնպէս մեծամարդիկ ինձ աշխատանք տան, բայց չէ, բանի զօրութիւնը կարելումը չէ։ Քալէքի աշխատատունը մի մեծ ընդարձակ դահլիճ է, մէջը գեղեցիկ փայտից հարթ ու հա-

ւասար հայելի պէս պսպղուն սեղաններ դարսած, բայց էս սեղաններու վրայ մէջքը ծռած քարտաշներ ու աշակերտներ չեն նստած ու նա էլ ուրիշներու պէս ձևելու համար մկրատ չէ դրած դնում ու կարիք էլ չունի իր միտքը դատբացնելու, որ մի աւելի փալասի կտոր դապդահի տակ ընկնի։ Բայց ամեն սեղանի վրայ մի պրսպղուն ոսկէ ասեղ է դրած ու նրա մօտ դնում է Քալէքը հագուստի չափսը, ինչ որ կարել է ուզում և հետո էլ ասում է, թէ էն հագուստը ինչպէս պէտք է արծաթով, ոսկուով կամ թանկագին քարերով զարդարուի ու ինչ բանից պիտի կարած լինի։ Մէկ էլ առաւօտը հագուստը պատրաստ դրած է լինում սեղանի վրայ։ Հիմիկ դու էլ լաւ կհասկանաս, որ Քալէքը էսպէսով ուրիշ դերձակներից լաւ ու աժան կբանի ու էտու համար էլ ոչ նրա մուշտարին թիւ ու համար ունի և ոչ էլ նրա հարստութիւնը։ Բայց Քալէքը էս բանը ոչոքին չէ ասում և ես շատ եմ աշխատել էտ գաղտնիքը իմանալու համար։

Աբուն էս պատմութենի ժամանակը գլուխը ժաժ էր տալի ու կարծում էր, թէ օտարականը ժամանակը անկացնելու համար էր նրան էտ հեքիաթը պատմում։ Մինչև օտարա-

կանը իր պատմութիւնը կվերջացներ, Աբուն էլ իր կարը վերջացրեց։ Օտարականը նրան առատ վարձ տալուց ետոյ հեռացաւ։ Էս պատմութիւնը Աբուի որդի Ալիի վրայ շատ մեծ ներգործութիւն ունեցաւ, նրա գլխումը ոսկէ ասեղները սկսեցին պտուտ գալ։ «Հայ գիդի, հայ», մտածում էր նա, «էհ ինչ պատուական կեանք կլինի, էտպէս առանց աշխատանքի մեծ մեծ գանձեր հաւաքելը։ Ա՜խ, ո՞վ է կարող էն պատուական ոսկէ ասեղները գտնել։»

Շատ էսպիսի մտածմունքներից ետոյ ասեց նա իր հօրը. «Կարծեմ որ ձեր անպիտան դաշգահի վրայ մնաներս կոշտ ասեղներով բաւական ծակծկել եմ։ Ես հիմիկ ճանապարհորդութիւն պիտի անեմ։ աշխարհք տեսնիմ, և պիտի աշխատիմ մի աւելի լաւ վիճակի հանդիպելու։»

Հայրը էտուր ընդդէմ ոչինչ չկարողացաւ ասել։ Ալին կապեց իր կապոցը. բարևեց իր հօրն ու մօրը, ու ճանապարհ ընկաւ։ Նա իր քայլերը ուղղեց դէպի Արևելք։ Ամեն տեղ, ուր որ գնում էր, քաղաք թէ գիւղ, հարցնում էր ոսկէ ասեղներ ունեցող վարպետի մասին, բայց ոչ ով չէր կարողացել նրան ասել, թէ ո՞ւր է նա և շատ անգամ էլ ծիծաղում էին նրա վրայ,

պատճառ վնքաշուած էին կարծում, բայց էլի Ալին չէր յուսահատվում: Նրա միտքը էն էր գալի, որ օտարականը Քալէքի պատմութիւնը պատմելու ժամանակ ասել էր, որ Քալէքը էս բանը ծածուկ է պահում և որ ինքը շատ էր աշխատել, մինչև որ իմացել էր էս գաղտնիքը:

Վերջապէս հասաւ նա Պարսկաստանի մայրաքաղաքը ու վեր եկաւ դերձակների քարվանսարայում: Էստեղ հարցրեց նա՝ թէ ո՞վ էր իր արհեստի ամենից հարուստ ու երևելի վարպետը և շատ ուրախացաւ, երբ որ նրան Քալէքի անունը տուին. իսկոյն խնդրեց որ նրա բնակութենի տեղը նկարագրեն ու ուղղակի գնաց նրա մօտ:

Մի մեծ սիրուն տուն էր նրա բնակարանը, որի առաջևը հարուստ կառքեր գալիս ու գնում էին, որի մէջ թանկագին շորերով զարդարուած ծառաներ դէս ու դէն էին վազվզում, որոնցից մէկին ասեց Ալին, որ կամենում է տեսնել տան տիրոջը և մինչև պատասխան կստանար, ժամանակ ունէր նա էն ողջ պատուական բաները տնտղելու, որոնք նրա շուրջը կային ու մոքումն էլ էն ժամանակների համար ուրախանալու, երբ որ ինքն էլ էնպէս բաներ կկարողանայ ունենալ:

Վերջապէս եկաւ վարպետ Քալէքը և հարցրեց՝ թէ ի՞նչ է նրա ուզածը: Ալին համարձակ պատասխան տուեց էսպէս. «ես էլ ձեզ պէս մի դերձակ եմ, բայց զորդն ասած, համբերութիւնս հատել է իմ ցած սենեակումը նստելուց, առաւօտից մինչև երեկոյ մատներս խոցոտելուց ու էլի հազիւ մի ցամաք հացի դէն վաստակելուցը: Էտուր համար եկայ ես ձեզ գտնելու ու ձեզանից խնդրելու, որ ինձ ձեր ոսկէ ասեղներից մէկը կամ երկուսը տաք, որ ես էլ վերջապէս կեանք վայելել կարողանամ:

Էս խնդիրքը Քալէքին վախացրուց. էս համարձակ խնդրողին գլխից մինչև ոտը ուշադրութենով տնտղելից ետոյ, ասեց. «էհ՛յ, էյ, որդի՛, էտ ո՞վ է քեզ իմ արհեստի գաղտնիքը ասել: Բայց որովհետև դու իմանում ես, յօժար եմ քեզ էն ասեղներից մի քանիսը տալ, բայց պէտք է ասեմ քեզ, որ իմ ասեղները միայն նրան են ծառայում, ով որ իր արհեստը կատարեալ իմանում է և էտ իւր գիտութիւնը մի երևելի աշխատանքով ապացուցել է: Բայց ինձ թուում է, որ դու դեռ պատրաստ չես էտուր համար, ուրեմն պէտք է դեռ իմ մօտ մի քանի

ժամանակ սովորես, որ էտ աշխատանքը օրինաւոր գլուխ բերել կարողանաս։»

—Լաւ, պատասխանեց Ալին, որի գլուխը ուրախութենից պտուտ էր գալի, ինչ որ իմ ձեռնից կգայ, ես կանեմ։ Քալէքը նրան մի սեղնակ տարաւ, որն որ ուրիշ դերձակներու աշխատանոցից ոչնչով չէր զանազանվում։ Մի սեղանի վրայ նստած աշխատում էր արիութենով՝ մի տարիքով սպիտակ մազերաւոր մարդ։ Սրան ասեց Քալէքը. «Ահա, Մաֆուն, բերում եմ մի նոր աշակերտ։ Քննիր ու իմացիր, թէ ինչ է իմանում և սովորացրու ինչ որ հարկն է, որ ժամանակով մի օրինաւոր վարպետ դառնալ կարողանայ։»։

Կարճ միջոցում իմացաւ Մաֆուն, որ իր պատուական աշակերտը դեռ ոչինչ կամ շատ քիչ բան էր սովորած և սկսեց իր դասերը։ Ալին պէտք էր իր ասեղը լաւ արիութենով բանացնէր ու դէսուդէն էլ չպիտի մոռի տար՝ թէ որ վարպետից անարգուիլ չէր ուզում։ Էս բանը Ալիին ամենևին չէր դուր գալի, հնդուր համար, որ գլուխը էն մտքով ունէր լքցրած, որ միշտ պարապ ու փառաւոր ապրի, մուղայիթ բան անելը ամենևին չէր դիր գալի ու Մաֆուի

խրատները նրա ականջը չէին մտնում և օրէցօր Ալիի ծուլութիւնը ու անհոգութիւնը աւելանում էր։

Երեք ամիս անցկենալից ետոյ՝ Քալէքը մտաւ արհեստանոցը ու հարցրեց նոր աշակերտի որպէսութիւնը։ Մաֆուն պատասխան տուեց գլուխը ժաժ տալով. «Դա բան չի դառնայ, վարպետ, մի էս անպիտան կարին մոռիք արէք, որնոր դա անում է. դա ծոյլ է և շատ անուշադիր ու իմ աշխատանքն էլ ապերախտութենով է վարձատրում։»

Էս լսելից ետոյ՝ բարկացած մոռիկ արաւ Քալէքը ամաչցրած Ալիին ու ասեց. «Էյ, անխելք տղայ, կարելի է որ էտպէսութենով ըլիս ուզում էն թանկագին ղենաթը ձեռք բերել։ Լաւ իմացիր, որ բաղդին էլ արիութենով ու բարի կամքով պիտի մարդ արժանանայ. դա ծոյլ մարդու համար անհասանելի բան է. գնա էլի էնտեղ, որտեղից որ եկել ես և աշխատիր, որ քեզ փոխես, թէ ուզում ես որ լաւ օր տեսնես։

Լապէս Ալին սոխպուտեցաւ էնտեղից հեռանալու, ինչ տեղ էլ որ յոյս ունէր իր սրտի ցանկացած բաղդին հասնելու. էլի խեղճ ու անշնորհք, ինչպէս առաջ, պէտք էր իր խեղճ

ծնողաց տունը ետ դառնար։ Բայց էլի նա խե-
լք Քալէքի խրատին չէր հետևում. նա էլի
ծոյլ էր, ինչպէս առաջ. ոչինչ բանի պէտքական
չէր ու իր ծնողների համար մի ծանր բեռը։

Ալին որ իր ծնողական տունը թողեց,
նրա փոքր եղբայր Շերուն բռնեց դպրոցի վրայ
պարապ մնացած տեղը։ Սրան ոչ ոք ծոյլ և
անշնորհք չէր կանչ ասի, պատճառ որ ուրա-
խութենով էր աշխատում և երևում էլ էր, որ
շուտով իր հօր համար լաւ օգնական պիտի
դառնար. նա իր աշխատանքի ժամանակն էլ
միշտ ուրախ ու բաւական էր։

Ալին յետ դառնալուց ետոյ՝ պատմեց, որ
ղորդ տեսել էր Քալէք վարպետին, բայց իրեն
արդարացնելու համար աւելացրուց, որ ոսկէ
ասեղներու պատմութիւնը հեքիաթ է, որն որ
Քալէքը էնդուր համար է գործ դնում, որ ա-
մեն կողմից լաւ վարպետներն իր մօտ հաւաքէ
և նրանցն էնքան բանացնէ, որ նորանք վեր-
ջապէս յուսահատուած ձեռը վեր առնեն նրա-
նից ու ոսկէ ասեղներից. էտուր համար ինքն
էլ չէր դիմացել և եկել էր տուն։

Այս պատմութիւնը Շերուի վառվռուն սրը-
տումը ցանկութիւն զարդացրեց իր բաղդը

փորձելու ու էլ հանգստութիւն չունէր, մինչև
որ հօրից հրաման ստացաւ Պարսկաստան ճա-
նապարհ ընկնելու։ Ուրախ սրտով ճանապարհի
վրայ կանգնեց նա և պատճառ որ նա հաստատ
իմանում էր՝ թէ ուր պէտք է գնայ, առանց
փորձանքի հասաւ իր ուզած տեղը և յայտ-
նուեց վարպետ Քալէքին։ Ինչպէս առաջ նրա
եղբայր Ալին, մի և նոյն կերպի ընդունեց սրան
էլ Քալէքը և փոքր ժամանակից ետոյ նստած
էր սա ծեր Մաֆուի կողքին ու ուրախ ուրախ
իր կարն էր անում։ Նա արի ու ուշադիր էր
իր գործին և իր աշխատանքը կատակով (հա-
նաքով) և երգելով էր անում, էնպէս որ շատ
անգամ վարպետը ստիպուած էր լինում սուս
կացնել նրան։

Ժամանակ առ ժամանակ հարցնում էր
Քալէքը նոր աշակերտի մասին, բայց քանի որ
նրա գովասանքը լսում էր, էնքան էլ ուշ ուշ
էր երևում նա։ Վերջապէս երկու տարին էսպէս
անցկենալուց ետոյ, որի մէջ որ Շերուն ամեն
բան սովորել էր, ինչ որ իր արհեստը լաւ իմա-
նալու համար հարկաւոր էր, կանչեցին նրան
վարպետի մօտ. սա առանց մէկ խօսք ասելու
նստեց նրա հետ մի չորս ձի լծած կառքի մէջ,

որն որ ամպի պէս գոռգռալով քաղաքիցը դուրս գնաց։ Ճանապարհը շատ գեղեցիկ էր, բայց Շեբուն ոչ էտուր վրայ էր ուշադրութիւն դարձնում և ոչ էլ իր վարպետի լռութենի վրայ. նա ուրախ սրտով մտածում էր, որ շուտով խոստացած ոսկէ ասեղներու տէր պիտի դառնար։

Վերջապէս կառքը մի առանձնացած, բայց հիանալի ամառանոցի առաջէը կանգնեց. նրանք վեր եկան ու մտան մի էնպիսի դահլիճ, որի պայծառութիւնը և հարստութիւնը ամեն բանից բարձր էր, ինչ որ Շեբուն մինչև էն ժամանակ տեսած էր։ Հիմիկ կարեց Քալէքը իր լռութիւնը՝ ասելով. «Մինչև էս օր ես բաւական եմ քեզանից, Շեբու և հիմիկ ուզում եմ քեզ մէկ կար յանձնել, որի աւարտելից ետոյ՝ դու քու ցանկացած վարձը կստանաս։ Բայց ես կամենում եմ, որ նա՝ ով որ մի դժուար բան ունի շինելու, կատարելապէս անկախ լինի։ Համարիր յօրէս ի դէնը էս տունը ու ամէն բան ինչ որ նրա մէջ կայ և ողջ նրա շրջակայքը, ինչպէս քու սեպհականութիւնը։ Քեզ ոչինչ պակաս չի լինի քու կեանքը պահպանելու ու ուրախացնելու համար, բայց ես խորհուրդ եմ տալի քեզ, որ չափաւոր լինիս։ Երեք ամիս ժամանակ եմ տալի քեզ, բայց ջանք արա, որ ես էն ժամանակ էտ կարը աւարտած տեսնեմ, թէ չէ ամեն քո մինչև հիմիկ արած աշխատանքը փուչ է։»

Էս խօսքերից ետոյ՝ Քալէքը յետ դառաւ քաղաք ու բախտաւոր Շեբուին մենակ թողեց իր նոր կալուածի մէջ։ Էն կարը, որով որ նա իր վարպետութիւնը պէտք է ապացուցանէր, մէկ սիրուն վերարկու էր, որն որ պէտք էր առատ ոսկւով ու թանկագին քարերով զարդարել. նրա մասալէքը և նկարը, որի նման որ պիտի շինուէր՝ դարսած էին դահլիճի սեղանների վրայ։

Բայց Շեբուն դեռ իր բանը չսկսած՝ ուզում էր իր նոր սեպհականութիւնը մի լաւ տեսնել։

Նա մանեկաւ սենեակները և հիացած մնաց՝ տեսնելով ամեն տեղ միևնոյն շքեղութիւնը ու հարստութիւնը։ Բայց ամենից աւելի դուր եկաւ նրան խոհանոցը, որի մօտից անցկենալու ժամանակին աչքը քցել էր և որտեղ մի քանի խոհարարներ իրանց օգնականներով՝ պարապած էր տեսել ճաշի պատրաստութիւններով և որտեղից մի հրաշալի հոտ էր դիպել նրա քթին։

Վերջապէս մնաւ նա այդին, որի գեղեցկութիւնը լեզուն յետ պատմել չէ կարող: Մի տեղ մեծ մեծ ծառերը իրենց չորս կողմը զովարար ստուեր էին գցում՝ միւս տեղ կանաչ խոտի խալեչայի միջից խփում էին սիրուն շաղրուանները, որոնց անդամանդի պէս պարզ ջուրը վեր դառնալու ժամանակը արեգակի ճառագայթներու հետ խաղալով ծիրանի գոտիի գոյներով էր ներկվում: շատ տեղ վազի տերևներով ծածկած հովանոցիկը հրաւիրում էր իր ստուերի մէջ հանգստանալ: հաւասարած ու գոյն գոյն աւազով ծածկած ճանապարհներու կողքերումը շարուած էին սիրուն ծառեր, որոնց զուարթ կանաչ տերևներու միջից քաղցրահամ պտուղներ էին երևում և հիանալի ծաղիկներով լեցը մարգերը ուրախացնում էին մարդու աչքը ու իրենց անուշ հոտով լցնում էին էս փոքրիկ դրախտը: Շերուն չէր կարողացել կշտանալ էս պատուական պարտիզում զբօսնելուց և նրա գեղեցկութիւնները տնտղելուց. նրան թվում էր՝ որ էսպիսի տեղ մնալը երկնային վայելչութիւնի հետ հաւասար պիտի լինի: Սրան էս պարտէզը էնպէս էր գլխից հանել, որ էլ չէր իմանում թէ ժամանակը ինչպէս էր անցկենում: Ճաշի ժամա-

նակը հասել էր. ծառաները իմաց տուին նրան, որ ճաշը պատրաստ էր: Բայց սեղանատանը, ինչպէս նա սպասում էր, մենակ մէկ մարդու սեղան չէր պատրաստած, բայց մի մեծ մեծարանքի սեղան: Ժամանակ չանցաւ, հիւրերն էլ եկան ու ողջունեցին նրան իբրև տանտիրոջ և իբրև նրա հրաւիրածներ: Թէպէտ Շերուն ոչ ճանաչում էր նրանցը և ոչ էլ հրաւիրելուց խաբար ունէր, բայց պատուով ընդունեց նրանցը, ինչպէս տանուտէր, սկսեց խօսել նրանց հետ համարձակ շատ էնպիսի բաների վրայ, որոնց անունները հազիւ թէ իմանում էր և վերջապէս նշանով իմաց արաւ, որ կերակուրները մօտ բերեն: Ամենքը բազմեցան սեղանի շուրջը և սկսեցին ճաշը վայելել, բայց բաւական չէր որ հիւրերու բերնի համար առատ հոգս էր արած, նրանց աչքը ու ականջը զուարճացնելու համար էլ ոչինչ չէին խնայել: Սեղանատան կողքի սենեակներից մի հիանալի երաժշտութիւնի ձէն էր գալիս. յանկարծ դռները բացուեցան և ներս եկան, սիրուն շորերով զարդարուած, պարեկող տղերք ու աղջիկներ, որոնք կամ արհեստական պարերով պտտում էին սեղանի շուրջը կամ սիրուն պատկերներ էին ձևացնում:

Շերուն հիացած մնացել էր և իր մտքումը գովում էր վարպետ Քալէքի լաւ սիրտը ու ճաշակը: Հիւրերը սեղանից ետոյ՝ նոր նոր զուարճութիւններ էին հնարում և էսպէս պարերով ու երգերով անց էին կացնում ժամերը. էստունցումը գիշերն էլ վրայ հասաւ ու ստիպեց նրանցը տան տիրոջը բարևելու ու էլի ետ դառնալ, որ տեղից որ եկել էին:

Մի փափուկ մետաքսէ անկողնի մէջ հանգստացաւ Շերուն և քաղցր երազները էլի մի անգամ նրան ներկայացրին էն օրուան տեսած վայելչութիւնները: Արեգակը վաղուց դուրս էր եկել և իր լոյսը փռել երկրի վրայ, երբ որ Շերուն աչքը բաց արաւ. նա վեր թռաւ անկողնից և իրան յանձնած կարը ձեռն առաւ. բայց վայ էն կարին ու ձևին, ինչ որ նա անում էր—շուտ շուտ կոնները թուլացած վեր էին դառնում, անցկացած օրուան բաներու վրայ մտածելով ու միտքը հարցմունքներով դադրեցնելով՝ թէ էն օրն էլ պիտի տեսնէ էն լաւ բաները՝ թէ չէ: Անցկացաւ առաւօտը ու վրայ հասաւ ճաշուայ ժամանակը, բայց նրա կարը ամենևին չէր առաջացել: Հիւրերն էլի եկան ու էլի սկսուեց անցկացած օրուան ուրախութիւնները,

որ Շերուին շատ ու շատ դուր էին գալի:

Ութ օր էսպէս անց էին կացրել, բայց դեռ նրա աշխատանքի սկիզբն էլ չէր երևում. Նրա թերեւամտութիւնը խորհուրդ էր տալի նրան, որ քանի միջոց ունի, վայելէ էն ուրախութիւնները. դեռ էլի ժամանակ շատ է մնում քեզ քո կարը աւարտելու համար, ասում էր նա ինքն իրան: Էս միջոցում՝ մէկ գիշեր երևեցաւ նորան երազումը Ծեր Մաֆու վարպետը. նա սպառնալով մատը բարձրացրուց ու ձէն տուեց նրան. «Շերո՛ւ, Շերո՛ւ, խելքդ բեր, ժամանակը անցաւոր է և էն ժամը որն որ դու կորցրել ես մէկ անգամ՝ էլ չի՛ ետ դառնայ, քանի էլ զղջաս:» Էս երազը Շերուին զարդացրեց, բայց էլի կէս օր էր դառել, նա տեղից շուտով վերկացաւ և իր կարը ձեռն առաւ ու հաստատ միտքը դրեց, որ լաւ աշխատի և որ էն ամեն օր եկող հիւրերից հեռու կենայ: Բայց ի՞նչ կօգնեն լաւ լաւ վճիռները, երբ որ նրանցը հաւատարիմ մնալու զօրութիւնը պակաս է մարդուն: Մինչև էսօր էս ապարանում վայելած ուրախութիւնները նրա մտքիցը չէին դուրս գալի և էսպէսով նրա վճիռը բոպէից բոպէ թուլանում էր, էնպէս որ ճաշուան ժամը չխփած՝ նա

3694 Կ

էլի պատրաստ էր իր հիւրերուն ընդունելու համար. նա շուտով ծեր Մաֆուի խօսքերն էլ մոռացաւ ու իր վճիռն էլ ու ինչպէս առաջ անց էր կացնում օրուայ մեծ մասը ուրախութիւններում, բայց իր կարին զգուելով էր ձեռը տալի:

Իսպէսութենով մի քանի շաբաթ էլի թռել էին, որ յանկարծ մէկ տեսիլք սրան երևեցաւ. նա տեսաւ իր սեպհական պատկերը, բայց միայն մի քիչ ծերացած, մի աղքատ ու կեղտոտ խրճթի մէջ, չոր յարդէ մահճի վրայ, յուսահատութենի ու զղջման հետքերը դեղնած երեսի վրայ: Էս սարսափելի պատկերի առաջևը կանգնած էր ծեր Մաֆուն՝ զգուշացնելով և էն պատկերը ցոյց տալով և ասելով. «Ահա էտ է սպասում քեզ, եթէ էսպէս կշարունակես:» Վախացած վեր թռաւ Շերբուն իր մեռաքսէ անկողնից և աւելի հաստատութենով քան թէ մինչև այժմ վճռեց ինչ որ մինչև հիմիկ կորցրել էր՝ սաստկացրած աշխատանքով տեղը բերել: Էս վճռի մէջ հաստատ մնալու համար կողպեց իր աշխատելու սենեակի դռները ու սկսեց իր կարը. բայց ա՜խ, երբ որ իր մինչև հիմիկ արած կարին լաւ աչք ածաւ՝ տեսաւ որ ողջ վատ ու անպիտան էր:

Յայտնի բան է, որ էսպէս էլ պէտք է լիներ, ինչու որ էն անդադար ուրախութիւններն էլ նոքա մէջ գործի համար ուշադրութիւն չէին թողել: Հիմիկ նստած էր նա աչքերը ներքև գցած, ինչու որ մոռացում էր, որ ինչպէս էլ որ արի աշխատի ու դիշեր կոտրէ, դժուար թէ կարողանայ ժամանակին վրայ հասցնել կարը: Ցուսահատութիւնը տիրեց նրան և իր մեղքը ճանաչելու և աշխատելու տեղ, որ իր հաստատ կամքովը յաղթէ դժուարութենին, անց էր կացնում ժամանակը վայ տալով ու դահլիճի մէջ դէս ու դէն վազելով և ամեն իր տարաբաղտութենի պատճառ համարում էր միայն իրան:

Վերջապէս եկաւ հիւրերու գալու ժամը. ապարանը կենդանութիւն ստացաւ. հիւրերն եկած պտռում ու կանչում էին Շէբուին, որն որ կողպած սենեակում շատ լաց լինելուց ուռած աչքերով իր կարին էր մոտիկ անում: Վերջապէս ընկաւ նրա ականջը հիւրերու ձէնը, որոնք կանչում էին նրան. բաժակներու ծրնգալը և երաժշտութենի ձէնը և նա էլ չկարողացաւ էս բոլոր աչք խաբող բաներուն ընդդէմ կենալ. նա դուրս վազեց, ինչպէս ասում էր, մի փոքր իր

տխուր մտքերը ցրուելու համար, բայց ինչպէս առաջ՝ մանանակից եղաւ նա օրուայ ուրախութիւններին:

Իսկ ինչ բանը երկարացնեմ, օրերն անց էին կենում և նրա բարի դիտաւորութիւնները չէին կարողացել ընդդէմ կենալ էն հրապուրանքներին. նշանադրած ժամանակի վերջի րոպէն վրայ հասաւ նրան իր ընկերներու մէջ. մի սարսափելի ձայն յանկարծ նրան խլացրեց և մէկ աչքախփուկի մէջ ոչնչացան նրա աչքից հիւրերը — ապարանը և ամէն բան, ինչ որ նրան շրջապատում էր. հեռուից միայն տեսնում էր քաղաքի աշտարակները ու լսում էր Քալէքի ձէնը, որ ասում էր նրան, եթէ ուզում ես կեանքիդ մէջ բախտաւոր լինել սովորիր առաջ քու անձը զսպել:

Աղքատ և յուսահատ, դարդակ խուրջինը ուսին գցած՝ գնաց Շերուն ծանր քայլերով դէպի իր հայրենիքը. նրա ծնողքը և եղբայրները նրա յուսահատութիւնը տեսնելով՝ իրանք էլ տխրեցան և աշխատում էին նրան մխիթարելու, բայց ի զուր. նա կեանքից զզուել էր, աշխատանքը ձանձրացնում էր նրան, և նա իր միտքը անդադար չարչարում էր յիշելով էն բախտը, որ կորցրել էր իր թերեւամտութենով:

Զէմին՝ Աբուի որդկերանցից ամենից փոքրը, էս միջոցումը մեծացել էր. սա բարի ու աշխատասէր էր ու իր ծնողներու միակ մխիթարութիւնն էր ամբան տարաբաղդութիւններու մէջ:

Բայց նրա ընտանիքի աղքատութիւնը քանի գնում՝ աւելանում էր և որովհետև նա ամէն բան ուզում էր փորձել իր ընտանիքի վիճակը լաւացնելու համար, էտուր համար նա էլ ուզեց փորձել էն, ինչ որ իր եղբայրներից խլել էր կեանքի հանգստութիւնը: Թէպէտ Շերուն ամէն կերպի աշխատել էր թաղցնելու էն՝ ինչ որ իր գլխին եկել էր, բայց էլի Զէմին աջողել էր զանազան անակնկալ հարցմունքներով իմանալ էնքան, ինչքան որ պէտք էր իրան. նա կարծում էր, որ ունի բաւական խելք ու զօրութիւն իր նպատակին հասնելու համար:

Շատ խնդրելուց ու պաղատելուց ետոյ՝ վերջապէս ստացաւ նա իր ծնողների համաձայնութիւնը՝ գնալ օտար երկիրներ. էս հրամանը որ ստացաւ, ուրախ սրտով ճանապարհ ընկաւ ու շուտով հասաւ վարպետ Քալէքի մօտ: Սորա

խնդիրքը ընդունվեցաւ էն պայմաններով, ինչ պայմաններով էլ ընդունուել էին նրա եղբայրներու խնդիրները ու նա յանձնուեցաւ ծեր Մաֆուին։ Փորձի տարիները պատուով վերջացնելուց ետոյ, տարաւ Քալէքը նորան էն պատուական ամարանոցը, ուր որ նա իր վարպետութենի կարը պիտի անէր։

Ին շքեղութիւնը, որն որ տեսաւ նա էս տեղ՝ ուրախացրուց նրա աչքը, նա հետաքրքրքրութենով մտն եկաւ սենեակները ու այդու մէջ. ճաշուան ժամը որ հասաւ՝ եկան հիւրերը, որոնց նա սիրով ընդունեց և նրանց հետ սեղան նստեց։

Էս էնդուր արաւ նա, որ իմանայ՝ թէ իր եղբօր Շերուի պատմածները ինչ աստիճան ճշմարիտ էին, բայց ոչ մէկ խնդիրք չկարողացաւ նրան ստիպել չափաւորութենի սահմանից անցկենալու։ Էս նրա յամառութենի վրայ հիւրերը կարծես վերաւորուեցան ու դեռ կէս գիշերը չհասած՝ հեռացան նրանից։ Զէմին հաւաքեց կերակուրների մնացորդները, ինչքան որ կարող էր, տարաւ էն սենեակը, որն որ նշանակած էր նրա աշխատելու համար և կողպեց դռները ու մնաւ քուն. դեռ արեգակը չէր

դուրս եկել, որ Զէմին նստած էր իր կարի վրայ։

Ղորդ է, կէս օրուան ժամանակը որ հասաւ, եկան հիւրերը, խփում էին նրա դռանը և կանչում էին նրան, բայց չէ, Զէմին քար էր կարուել, մկան պէս կուչ եկել ու ձէնը կտրել միայն իր մտքումը ասում էր. «Ի զուր էք դուռը խփում ու կանչում, որ դուռը կոտրէք էլ և բղաւելով ճաքէք, ես ձեզ մօտ դուրս եկողը չեմ, փառք Աստուծոյ, դեռ սովից չեմ մեռնի. էստեղ հաւաքուած պաշարս ինձ բաւական ժամանակ հերիք է, ետոյ էլ յոյս ունիմ, որ ինձ Քալէքը սոված չի թողնի, ինչպէս խոստացել է։»

Էլի մի քանի անգամ փորձեցին հիւրերը նրան գլխից հանելու, բայց տեսնելով՝ որ անմեղ տեղն է անցկենում նրանց չարչարանքը, ձեռը վեր առան նրանից։

Նրանց տեղ գալիս էր Զէմիին ամեն օր մի հասարակ կերակուրներով զարդարած սեղան, որով Զէմին շատ բաւական էր։

Բայց հիմիկ նրա գործի վերջանալուն ուրիշ զարմանալի ու նրան անհասկանալի դժուարութիւններ էին դէմ գալիս, անդադար ասեղները կոտրվում էին. թելը կտրվում էր և շատ

անգամ էլ առաւօտը վերկացած տեսնում էր՝ իր անցկացած օրուայ արած կարը քանդած. ինչ ասել կուզէ, որ Զէմին էս իր ծածուկ թշնամիներուն և նրանց եօթը պորտը էրուածսրտով անիծում էր, բայց տարեկուսելու ու ձեռները կցելու տեղ աւելի արիութիւնով սկսում էր իր գործը ու ասում էր ինքն իրան. «Էյ, ուստայ Քալէ՛ք, թէկուզ դու էսպէս բաներով կարողանաս ազատուել քո խօսքը կատարելուցը, բայց չ՚պիտի կարողանաս ասել, որ ես ծոյլ ու անհամբեր եմ, տեսնենք էստոնց ծէրը որտեղ է կտրվում։»

Արիութիւնը և հաստատամտութիւնը դեղեցիկ առաքինութիւններ են և ամենից զօրեղ օգնականներ դժուար աշխատանքի մէջ։ Զէմին փոշմանելու բան չունէր, որ սրանցը հաւատարիմ էր մնացել. շուտով վերջացան էն սատանական բաները և դեռ նշանակած ժամանակը չհասած, վերարկուն կարած պատրաստ էր։

Մի հրաշալի բան էր դուրս եկել—Զէմին էլ բաւական ինքն իրանից զգուշութիւնով սրբում էր նրան և ուրախ ուրախ մտածում էր էն բոպէի վրայ, երբ որ նա էս շքա՛ղ թանկագին և արուեստով կարած վերարկուն ձեռին՝ վարպետին պիտի դէմ գնար։

Բայց երևի վարպետի սիրտն էլ իմացել էր որ վերարկուն արդէն պատրաստ էր ու Զէմին անհամբերութիւնով սպասում էր ցոյց տալու նրան, որովհետև նա էն բոպէին կանգնած էր նրա կողքին ու ժպտալով թափ էր տալի նրա ուսը ու ասում էր. «Շատ ապրիս, իմ լաւ ու աշխատասէր աշակերտ, ես քո կարած վերարկուից շատ ու շատ բաւական եմ ու ցանկանում եմ քո բաղտաւորութիւնը։ Ահա՛ էս փղոսկրէ սպաղանանումն է էն վարձը, որ ես քեզ խոստացել եմ, Աստուած տայ, որ շատ տարիներ վայելես նրան։»

—Ինչ ասել կուզէ, շարունակեց վարպետը, որ դու քու հայրենիքը ու քու աղքատ ծնողաց կարօտած կլինես և ցանկանում կլինես նրանց էլ շուտով բաղդաւորացնելու, էստուր համար կարող ես բանացնել իմ կառքը, որ ներքևը դրան առաջ կանգնած է. նա հողմի արագութիւնով կտանէ քեզ քու հայրենիքը։ Գնա՛ս բարով ու բաղդաւոր լինես և երբ որ քո գործը աջողակ գնայ, միտդ բե՛ր երբեմն քո վարպետին, որը միշտ պատրաստ է բաղդաւորացնել նրանց, որոնք

նրան հաւատում են։ Զէմին որքան էլ շնորհք ունէր գործ դրեց, որ վարպետին իր շնորհակալութիւնը յայտնի և ինչ որ նրա ճարտարութիւնը չկարողացաւ ասել՝ տեսցին նրա ուրախութենից արտասունքով լեցեալ աչքերը։ Էսպէս բաժանուեցաւ նա իր վարպետից, նստեց նրան առաջարկած կառքը ու ճանապարհ ընկաւ դէպի իր սիրելի Բաղդադ քաղաքը։

Էս կառքի մէջ լծած ձիաները երևի սովորական ձիաներ չէին, որովհետև նրանք ամենից արագ թռչող թռչուններու պէս էին գնում, էտուր համար էլ շուտով կառքը մտաւ էն փողոցը, որին Զէմին լաւ ծանօթ էր, ուր որ նրա հօր փոքրիկ աղքատիկ տունն էր։

Ինչպէս տեսնում ենք, Զէմին չեկաւ իր հօր տուն ոչ աղքատ, ոչ օգնութենի կարօտ, ոչ սիրտը ցաւով լեցեալ, որ իր սրտի ուզելիքը չէր կատարուել, ինչպէս նրա եղբայրները, բայց մի փառաւոր կառքում, որի մէջ չորս գեղեցիկ ու ազնիւ ցեղի հարուստ զարդարուած ձիաներ էին լծած։ Նրա ծնողքը իրանց աչքերուն չէին հաւատում՝ տեսնելով իրանց կրտսեր որդուն էնպէս առողջ ու ծաղկած դրութենում և գեղեցիկ ու հարուստ հագնուած, մինչև որ նա

ուրախ ուրախ նրանց ճոռովը չընկաւ ու չհամբուրեց նրանց։

Երկրորդ օրն և եթ պտռեց Զէմին իր ոսկէ ասեղներու համար աշխատանք և նրանց զօրութիւնը հաստատուեցաւ ամենագեղեցիկ կերպով. նրանց արուեստաւոր կարը ճարեցին շատ մուշտարիներ, հարստութիւնը փոխանակեց աղքատութենին—նա արդէն մէկ տարուց ետոյ կարողացաւ քաշուել իր ծնողներու հետ քաղաքի ամենալաւ տներից մէկը։ Բայց էս հարստութիւնը չհպարտացրեց նրան, այլ ընդհակառակն նա գործ էր ածում իր հարստութիւնը իր ծնողներու ծերութիւնը շնորհակալու սրտով ուրախացնելու համար. եղբայրական սիրով իր եղբայրներուն օգնելու ու մխիթարելու համար և բարեմտութենով աղքատներուն լաւութիւն անելու համար։

Նրան շատ անգամ հարցնում էին, թէ ի՞նչպէս է հասել նա էտ բաղդին, բայց նա չկարողանալով ոսկէ ասեղների գաղտնիքը յայտնել, որովհետև երդուել էր իր վարպետ Քալէքին, տալիս էր լաւ խորհուրդներ, ասելով՝ որ նրանց հետևելով դիպել էր ու դիպում էր իր հարստութիւնը։

Շահուեցէք երիտասարդութենով, որ մի օրինաւոր բան սովորիք. չափաւոր եղէք կեանքի վայելչութիւնը վայելելիս՝ հաստատ հրապուրող գայթակղութիւնների դէմ և մի՛ յուսահատուիք, եթէ ձեր բարի դիտաւորութիւնների դէմ դժուարութիւններ և ընդդիմութիւններ առաջ գան։

Ես էսպէս էլ դո՛ւք պէտք է անէք, իմ փոքրիկ կարդացողներ, թէպէտ ես չեմ կարող ասել ձեզ, թէ ո՛րտեղ կարող էք դուք գտնել ոսկէ ասեղներ, բայց կարող եմ հաւատացնել ձեզ, որ էսպէսով կընակի ձեր մէջ ոսկէ հանգըստութիւնը և բաւականութիւնը և կեանքի ուրիշ բաւականութիւններն էլ սրանց հետ կգան։

ՀԱՅՐԱՏՈՒ ՊՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ZSUR Arm.CCP
ԱՄ. Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

Գինն է 10 կոպեկ։

53X

0004688

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0004688